


**1.2. Արտադրություն (ժառայություններ)**

**1.2.1. Արդյունաբերություն**

**Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը:** 2006թ. հունվար-մարտին հանրապետությունում, ըստ 2185<sup>1</sup> արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 137928.1 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 139741.2 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 10123.9 մլն. դրամի, այլ երկրներում՝ 32811.5 մլն. դրամի արտադրանք:

2005թ. հունվար-մարտի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 95.3%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 95.7%:

**Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2004թ. դեկտեմբերի նկատմամբ**



**Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան**

(%)

2005թ.	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
հունվար	81.7	100.7	81.7
փետրվար	113.2	110.1	92.5
մարտ	111.6	103.7	103.2
ապրիլ	96.7	96.3	99.8
մայիս	103.2	110.9	103.0
հունիս	106.2	106.4	109.4
հուլիս	102.6	112.7	112.3
օգոստոս	89.2	105.1	100.2
սեպտեմբեր	105.8	105.6	106.0
հոկտեմբեր	103.7	103.8	109.9
նոյեմբեր	101.5	114.3	111.5
դեկտեմբեր	100.0	106.7	111.5

<sup>1</sup> Վիճակագրական դիտարկումից ժամանակավորապես հանված են այն արդյունաբերական կազմակերպությունները, որոնք հաշվետու ժամանակաշրջանին նախորդող երկու կամ ավելի տարիների ընթացքում որևէ արտադրական գործունեություն չեն իրականացրել:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
<b>2006 թ.</b>			
հունվար	73.3	98.7	73.3
փետրվար	113.3	97.9	83.0
մարտ	99.4	87.0	82.5

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը**  
ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2006թ. հունվար-մարտին<sup>1</sup>

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով <sup>2</sup> , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով <sup>2</sup> , մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
<b>Ամբողջ արդյունաբերությունը</b>	<b>137928.1</b>	<b>139741.2</b>	<b>95.3</b>
<i>այդ թվում՝</i>			
<b>էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում</b>	<b>32074.5</b>	<b>32074.5</b>	<b>93.7</b>
<i>որանից՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	30122.1	30122.1	94.8
<i>որից՝</i>			
էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	23805.5	23805.5	90.7
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	6316.6	6316.6	114.0
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	1952.4	1952.4	79.8
<b>հանքագործական արդյունաբերություն</b>	<b>22225.5</b>	<b>24484.4</b>	<b>96.6</b>
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	21556.4	23898.3	95.7
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	669.1	586.1	139.2
<b>մշակող արդյունաբերություն</b>	<b>83628.1</b>	<b>83182.3</b>	<b>95.5</b>
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	39584.7	37622.6	113.6
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	3476.6	3843.9	111.4
մանածագործական արտադրություն	521.1	461.5	89.7
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	395.5	337.6	92.4
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն	80.7	83.6	158.6
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	159.5	165.8	126.5
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	1967.5	1929.9	118.8
քիմիական արդյունաբերություն	1823.7	3199.8	52.0
ռետինե և պլաստմասսայե արտա- դրատեսակների արտադրություն	587.3	756.7	119.2


<sup>1</sup> Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

<sup>2</sup> Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ



	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով <sup>1</sup> , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով <sup>1</sup> , մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	4199.9	4448.1	128.4
մետաղագործական արդյունաբերություն	24172.9	22459.6	105.7
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	1383.0	1385.7	134.2
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	891.0	1060.3	69.0
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	1649.0	2885.0	63.3
գործունեության այլ տեսակներ	2735.7	2542.2	103.3

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2006թ. հունվար-մարտին





<sup>1</sup> Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:


Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում



Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




Հանքագործական արդյունաբերություն




- մետաղե հանքաքարերի արդյունահանում
- հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր

Մշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

2006թ. հունվար-մարտին իրացվել է թողարկված արտադրանքի ծավալի 101.3%: Նշված ժամանանակաշրջանում իրացված և թողարկված արտադրանքի ծավալների հարաբերակցությունն ըստ գործունեության հիմնական տեսակների, բնութագրվում է հետևյալով.



- 1 - էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
- 2 - Հանքագործական արդյունաբերություն
- 3 - Մշակող արդյունաբերություն, որից՝
- 4 - սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 5 - ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 6 - մանածագործական արտադրություն
- 7 - հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 8 - կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն
- 9 - բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
- 10 - հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 11 - քիմիական արդյունաբերություն
- 12 - ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
- 13 - այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 14 - մետաղագործական արդյունաբերություն
- 15 - պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 16 - մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 17 - ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 18 - գործունեության այլ տեսակներ

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ հանրապետության մարզերի, 2006թ. հունվար-մարտին<sup>1</sup>

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>137928.1</b>	<b>139741.2</b>	<b>95.3</b>
<i>այդ թվում՝</i>			
ք. Երևան	60291.1	59649.2	104.6
Արագածոտն	1623.5	1714.7	111.7
Արարատ	10353.7	10972.6	107.0
Արմավիր	8090.5	7451.9	111.4
Գեղարքունիք	2013.3	1984.4	54.7
Լոռի	10410.2	10400.7	98.8
Կոտայք	14645.9	14740.3	73.2
Շիրակ	3154.4	3131.2	99.0
Սյունիք	25229.4	27620.0	102.1
Վայոց ձոր	969.7	959.0	92.4
Տավուշ	1146.4	1117.2	116.6

2006թ. հունվար-մարտին 2005թ. նույն ժամանակաշրջանի համեմատ հանրապետության 6 մարզերի արդյունաբերական կազմակերպություններում արձանագրվել է արդյունաբերական արտադրության աճ, որը ներկայացվում է ստորև, ըստ մարզերի և արտադրությունների.

**-Երևան քաղաքում՝ 4.6%**, հիմնականում ի հաշիվ այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (148.4%), պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (127.9%), հրատարակչական և տպագրական գործունեության (119.4%), սննդամթերքի, ներառյալ խմիչքները արտադրության (118.1%), մետաղագործական արդյունաբերության (116.1%) և ծխախոտային արտադրատեսակների արտադրության (113.7%),

**-Տավուշի մարզում՝ 16.6%**, հիմնականում ի հաշիվ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (10.5 անգամ), էլեկտրաէներգիայի (3.4 անգամ) և թղթի, ստվարաթղթի և դրանից արտադրատեսակների արտադրության (120.0%),

**-Արագածոտնի մարզում՝ 11.7%**, հիմնականում ի հաշիվ սննդամթերքի, ներառյալ խմիչքները (114.2%) և ադամանդների արտադրության (110.3%),

**-Արմավիրի մարզում՝ 11.4%**, հիմնականում ի հաշիվ սննդամթերքի, ներառյալ խմիչքները (138.5%), ինչպես նաև ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրության (6.8 անգամ),

**-Արարատի մարզում՝ 7.0%**, հիմնականում ի հաշիվ սննդամթերքի, ներառյալ խմիչքները (123.7%) և ծխախոտային արտադրատեսակների արտադրության (108.7%),

**-Սյունիքի մարզում՝ 2.1%**, հիմնականում ի հաշիվ մետաղե հանքաքարերի արդյունահանման (103.5%) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները արտադրության (103.7%):


<sup>1</sup> Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, մարզերով առավել մանրամասն զետեղվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, մարզերով» վիճակագրական տեղեկագրում (Ճանկագիր՝ 1210-203):

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Շիրակի և Լոռու մարզերում գրեթե պահպանվել են նախորդ տարվա արտադրության մակարդակները (համապատասխանաբար, 99.0 և 98.8%):

Հարկ է նշել, որ հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի գրեթե 44%-ը բաժին է ընկել Երևան քաղաքի արդյունաբերական կազմակերպություններին:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ հանրապետության մարզերի, 2006թ. հունվար-մարտին



1. Երևան	2. Արագածոտն	3. Արարատ	4. Արմավիր
5. Գեղարքունիք	6. Լոռի	7. Կոտայք	8. Շիրակ
9. Սյունիք	10. Վայոց ձոր	11. Տավուշ	



1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

Կազմակերպությունների արդյունաբերական արտադրանքի արտադրության և իրացման ծավալներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2006թ. հունվար-մարտին

	Կազմակերպությունների քանակը	Արդյունաբերական արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ <sup>1</sup>	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ <sup>1</sup>	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
<b>Ընդամենը</b>	<b>2185</b>	<b>74579</b>	<b>119397.5</b>	<b>121210.6</b>	<b>94.7</b>
<i>այդ թվում՝</i>					
մինչև 5 մարդ (գերփոքր) <sup>2</sup>	1006	2450	1328.1	1342.9	45.4
6 – 50 մարդ (փոքր) <sup>2</sup>	921	14733	12432.0	12924.8	114.9
51 – 100 մարդ (միջին) <sup>2</sup>	91	6740	3586.0	3377.5	107.1
101 և ավելի մարդ (խոշոր) <sup>2</sup>	167	50656	102051.4	103565.4	93.7

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար, 46.0 և 42.2%: Հատկանշական է, որ վիճակագրական մոնիտորինգում 88.2% կազմող գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 11.5%-ը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր քանակում 7.6% կազմող խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 85.5%-ը:

2006թ. հունվար-մարտին արտադրված (հաշվառվող) 114 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 71 -ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2005թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակի կանոնադրական նշանակության արտադրանքի՝ 64 -ից 40 -ի և սպառողական ապրանքների՝ 50 -ից 31 -ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները<sup>3</sup>

(մլն. դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-մարտին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2006	2005 <sup>4</sup>	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	48351.5	44265.9	109.2
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	29162.4	28654.8	101.8
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	9894.9	5400.4	183.2
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	9294.2	10210.7	91.0
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության <sup>5</sup>	2294.7	2446.9	93.8
նշակութակենցադային և տնտեսական նշանակության	6999.5	7763.8	90.2

<sup>1</sup> Առանց ամենամյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առածգականությամբ ապրանքների բազային ցուցանիշի):

<sup>2</sup> Սույն բաշխվածությունը իրականացված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն, որի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-205):

<sup>3</sup> Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

<sup>4</sup> 2005թ սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2006թ. գներով:

<sup>5</sup> Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

**Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները<sup>1</sup>**

	2006թ. հունվար-մարտ	2005թ. հունվար-մարտ	2006թ. հունվար-մարտը 2005թ. հունվար-մարտի նկատմամբ, %
Միա <sup>2</sup> , տոննա	9212.7	7972.1	115.6
Մսամթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա	382.6	304.7	125.6
Պանիր, տոննա	2882.8	2864.9	100.6
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) <sup>2</sup> , տոննա	42260	39261	107.6
Պաղպաղակ, տոննա	98.6	77.3	127.6
Պահածո, տոննա	196.8	646.4	30.4
Ալյուր, տոննա	27516.7	32199.7	85.5
Ձավարեղեն, տոննա	172.9	258.8	66.8
Հաց և հացամթերք, հազ. տոննա	73.7	73.7	100.0
Հրուշակեղեն, տոննա	1126.7	784.7	143.6
Մակարոնեղեն, տոննա	676.5	563.6	120.0
Շաքարավազ, տոննա	-	571.0	-
Բուսական յուղ, տոննա	459.8	63.2	7.3 անգամ
Օղի և օղու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	2957.8	2723.7	108.6
Կոնյակ, հազ. լիտր	2084.7	1218.5	171.1
Գինի, հազ. լիտր	621.5	545.7	113.9
Շամպայն գինի, հազ. լիտր	63.9	63.0	101.4
Գարեջուր, հազ. լիտր	1255.8	1147.2	109.5
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	6054.3	4924.0	123.0
Բնական հյութեր, հազ. լիտր	1144.3	877.7	130.4
Հանքային ջրեր, հազ. լիտր	4300.6	4719.2	91.1
Աղ, տոննա	9638.9	7696.6	125.2
Սիգարետներ, մլն. հատ	618.7	571.3	108.3
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	89.2	104.8	85.1

**Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները**

	2006թ. հունվար-մարտ	2005թ. հունվար-մարտ	2006թ. հունվար-մարտը 2005թ. հունվար-մարտի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ <sup>2</sup>	13.0	46.3	28.1
Գորգեր և գորգեղեն, մ <sup>2</sup>	6397	5846	109.4
Գուլպեղեն, հազ. զույգ	127.3	41.1	3.1 անգամ
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	867.9	496.1	174.9
Կարի արտադրանք <sup>3</sup> , մլն. դրամ	1463.9	1537.5	95.2

2006թ. հունվար-մարտին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 53.5%-ով, լաքաներկանյութերինը՝ 26.4%-ով, քիմիկա-դեղագործական արտադրանքինը՝ 2.0%-ով, իսկ սինթետիկ կաուչուկի և լվացող, մաքրող և օսլայող միջոցների արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 87.8 և 31.8%-ով:

<sup>1</sup> Այստեղ և հետադարձ թերթված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղվում է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը ընդհանուր արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):

<sup>2</sup> Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

<sup>3</sup> Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

**Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները**

	2006թ. հունվար-մարտ	2005թ. հունվար-մարտ	2006թ. հունվար-մարտը 2005թ. հունվար-մարտի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ <sup>3</sup>	7424	2931	2.5 անգամ
Ապրանքային բետոն, մ <sup>3</sup>	15551	13561	114.7
Երեսպատման սալեր բնական քարից, մ <sup>2</sup>	35769	28250	126.6
Ոչ հանքային շինանյութեր, մ <sup>3</sup>	50862	54685	93.0
Կիր, տոննա	3015	888	3.4 անգամ
Ցեմենտ, հազ. տոննա	98.2	70.5	139.3
Փաշ, տոննա	6500	4540	143.2
Ուղիղ կտրվածքի տուֆ, մ <sup>3</sup>	3376	3296	102.4
Ծակոտկեն լցանյութեր, մ <sup>3</sup>	22278	11495	193.8
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ <sup>2</sup>	12889	8860	145.5

**Մետաղագործական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից 2006թ. հունվար-մարտին 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ նույնիսկ խտանյութի արտադրությունն ավելացել է 38.8%-ով, պղնձի խտանյութում պղնձինը՝ 8.1%-ով, ֆեռոնուկիդներինը՝ 0.8%-ով, իսկ ցինկի խտանյութի և կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 32.6 և 10.2%-ով:

**Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները**

	2006թ. հունվար-մարտ	2005թ. հունվար-մարտ	2006թ. հունվար-մարտը 2005թ. հունվար-մարտի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	5	1	5 անգամ
Ռելե, հատ	85629	82878	103.3
Ուժային ճկուն կաբելներ, կմ	38.9	1.0	38.9 անգամ
Տեղակայման հաղորդալարեր, կմ	149.9	39.1	3.8 անգամ
Էմալապատ լարեր և փաթեթալարեր, տոննա	31.2	13.1	2.4 անգամ
Էլեկտրաեռակցման սարքավորումներ, հատ	1365	1740	78.4
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	-	923.2	-
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	2111	2126	99.3
Պոմպեր, հատ	71	49	144.9
Համակարգիչներ, հատ	478	643	74.3
Էլեկտրական հաշվիչներ, հատ	9357	298	31.4 անգամ
Փագային ջրատաքացուցիչներ, հատ	153	100	153.0
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	27	39	69.2
Ավտոմոբիլային մարտկոցներ, հատ	-	657	-
Ավտոգենային սարքավորումներ, հազ. հատ	28.5	29.6	96.3
Մետաղահատ գործիքներ, հատ	44259	32251	137.2
Ցածրավոլտ էլեկտրական ապարատներ, հատ	18098	9182	197.1
Օպտիկա-մեխանիկական սարքեր և սարքավորումներ, հատ	287	1600	17.9

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ընդհանուր առմամբ, 2006թ. հունվար-մարտին հանրապետությունում թողարկվել է 1615.2 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 87.4%-ը: Ընդ որում, ՀԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 0.6% -ով, իսկ ՋԷԿ-երում և ՀԱԷԿ-ում նվազել է, համապատասխանաբար, 26.9 և 4.2% -ով:

2006թ. հունվար-մարտին ՀԱԷԿ-ը թողարկել է 757.1 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 46.9% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 552.0 մլն. կվտ ժամ և 34.1%-ը, ՀԷԿ-երը՝ 304.8 մլն. կվտ ժամ և 18.9%-ը, հողմային էլեկտրակայանը՝ 1.3 մլն. կվտ ժամ և 0.1%:

2006թ. հունվար-մարտին հանրապետությունում թողարկվել է 112.6 հազ. Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 60.0%: